

ցուցանէ զմեզ, քանի՜ եւս լայնուցանեն բազումք։ Ձիք որ ժառանգեցոյց զմեծութիւնս իւր որդւոց իւրոց, զի գերփեալց բարկութիւն զամենայն ինչ։ Ձիք որ եթող զինչս որդւոց, զի ոչ մնաց մնացորդ։ Սուգ դառն է յերկրի, բնկումն մեծ ընդ տիեզերս։ Ձիարդ խնդասցուք ի հնձանս, զի ահա դա՛ռն սուգ եղբարք մերոց։ Ո՛ր մըմնչեացէ ի հնձանս, զի ահա քաղաքք կարկեցան։ Հնձանք բարկութեան եղեն քաղաքք բնակչաց իւրեանց⁽¹⁾։ Բազում են տղայք հնձեալք անդ, քան զողկոյզս էթեալս աստ։ Բազում են աղճկունք⁽²⁾ թաղեալք, քան զխոս որ յորթն մեր։ Մնաց յորթն պատուակ⁽³⁾, եւ անդ ո՛չ մնաց մնացորդ։ Ողկոյզք միայն կէթալք լինին, մնայ⁽⁴⁾ ո՛րթն զգուշութեամբ։ Կորեան որթք եւ ողկոյզք իւրեանց, քաղա՛ք եւ բնակիչ իւրեանց։ Ո՛ր ելցէ ի հնձանս, զի ահա հնձանք բարկութեան են։ Յերկրի հեղձեալ են եւ թաղեալ են եղբարք մեր, երկիրդ եւ սէր ի միջի։ Կամ երկիրցուք իրբեւ զմեղաւորս, կամ լացցուք իրբեւ զթաճք։ Իրբեւ արտասուեմք վասն նոցա, զճաշակս սիրոյ⁽⁵⁾ մերոյ ցուցանեմք։ Մի լալին նիւթ հասարակաց, երկուս ուղւտս շահի։ Պաշտեն արտասուք ի միջի, զհեռաւորս եւ զմատաւորս։ Արտասուք որ հոսին վասն նոցա, լուսնան նոքաւք աղաւղութիւնք մեր։ Իրբեւ լամք վասն նոցա, զմուրճակ պարտուց մերոց ջնջեմք։ Ի տաճարիս մերում հեղձի լալին, նուէ՛ր ի բարկութեան լինի մեզ։ Ո՛ր ընթացի ի շինուածս, զի թաղերն շինուածք զանարս իւրեանց։ Եթէ ի սիրոյ ոչ ամաշեցուք, վասն բարկութեանն սարսեցո՛ւք։ Ո՛ր լուսնացէ զմարմին իւր ջուրը, ուր ընկերք իւր արեամբ զանդեալ են։ Ո՛ր մատիցէ առ եւզս անուշուռնս, զի ահա նեխեալ է գաւառն զիական[ը]ք։ Ո՛ր հարսն անուշասցի, զի քաղաքն հոտեցաւ մեռելովք։ Ո՛ւմ շայնացէ կերակուր, զի մեռա՛ն եղբարք մեր առ սեզան։ Ո՛ւմ անուշասցի ըմպելի, զի ահա կորեա՛ւ ըմպելի եւ ըմպող իւր։

Ո՞ր կարօսցէ մտանել ի բազմականս, զի մեռա՛ն ընկերք մեր ի բազմականս։ Ո՞ր կարօսցէ մտանել ի ճաշ, զի խափանեցա՛ն ճաշք ի բարկութեան։ Ո՞ր եղիցի ի զուարթութեան, զի տխու՛ր են հեղձեալք ի զժոխս։ Ո՞ր զնեացէ եւ տացէ զնոյ, զի խափանեցա՛ւ յանկարծ վաճառ շահի։ Դրունք բաց քաղաքաց, բղխմունք որդւոց մարդկան։ Ժողովք ժողովք բղխէին իրբեւ վտակք աղբերաց։ Աղբեր արտաքս եւեթ բղխէ, եւ զուռն ի ներքս եւ արտա՛քս։ Առաքինեցան զրունք քան զաղբերս, զի ի ներքս եւ արտա՛քս բղխէին։ Պէտքէս զոյնս ազգազգ զարդուք բղխէին դրունք քաղաքին։ Յաղբերէ մի ինչ միայն, ի նոցանէ ամենայն ինչ։ Անկան դրունք քուովք իւրեանց, ապականեցա՛ն դրաշուածք իւրեանց։ Սեղմեցան իրբեւ զաղբերս, հատան մտաւղք եւ ելաւղք։

Հրապարակեաց

Յ. Յ. Մ.

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ԵՐՈՒՍԱԳԼԵՄ—ԵԹՈՎՊՈԱ

Ամեն. Ս. Պատրիարք Հայր Կոնդակ մը ուղղած էր Երովպիոյ զանաժառանգ Իշխան Թաճարի Մառնէնի, որ պատասխանած է ասոր ճոճեմակալութեան համակով մը (Երովպեւրէն բնագրով եւ ձեռն. բրգմ.)։ Այդ երկու պատճառաւորով զարգացում է Սիոնի այս մրացեալ Թիւին սկիզբը։

Պատրիարքական Կոնդակը՝ Դաճաճառանգ Իշխանին յանձնուած է պատճառական արտադրութեամբ մը, Երովպիոյ հոգեւոր հովիւ Ս. Յովսէփի Ի. Վ. Կարապետեանի եւ զաղբային ժողովոյ Ահեմապէս Տիար Մարիկ Դեղզօֆի կողմէն, 1928 Փետր. 18. Եր. ստատ ժամը 9-ին։

Իշխանը, շքապատուած իր նախարարներէն, պալատականներէն, ընդունած է Ս. Յովսէփի Ի. Վ. Կարապետեանի եւ Տիար Մ. Դեղզօֆը։ Կոնդակին հայեւրէն բնագիրը կարգացած է Հոգեւոր Հովիւր, իսկ Երովպեւրէն բարգմաճարիւնը՝ Տիար Դեղզօֆ։ Կոնդակը Երովպիոյ դրօշին զոյնով զարեի մէջ պատասխանով յանձնած են Իշխանին, որ աս գոն եղած է եւ զեւր մեծարանմեքով պատուած է Հայոց Երուսաղէմի Ս. Պատրիարքին ներկայացուցիկներ, եւ յայնժամ է միանգամայն րէ այս ասիայ ալ իր Տիկինը, իշխանուցի Վոյգօրմանու ուխտի պիտի երթայ Երուսաղէմ, Ջահիկի տարի։

Ինճն՝ Երովպիոյ Հոգեւոր Հովիւն ալ արտօնաբխեալ տուած է Իշխանին Երուսաղէմ գալու ուխտի համա, որ արդէն հասաւ Ս. Յակոբ՝ Մարտ 18. կիրակի առաւ։

(1) Օր. ունէր՝ իւրեց, ուղղեալ յաւելմամբ եւս ի վերայ տողին։

(2) Այսպէս յօրինակին։

(3) Բառ այլուս անճամօր. արդեւ = պտուկ։

(4) Յօր. զի առանց յ։

(5) Սիրոյ յաւելեալ ի յուսմեցա ի ձեռն արբաղչին։

ԵՐՈՒՍԱՂԷՄ — ԿԻՊՐՈՍ

Ամեն. Ս. Պատրիարք Հայր, Կիպրոսի առաջին Յուդեականի առթիւ շնորհաւորական հեռագիր մը բաժան էր, իր Բաղնիքին, Կիպրոսի վրէժ. Կառավարիչ Սրբ Ռոմայոս Սորոսի, որ խնամալիւ նամակով մը պատասխանած է ասոր։

Ս. Պատրիարքին հեռագիրը.

1928 Յնվր. 31. Երուսաղէմ

Ն. Վ. Սրբ Ռոմայոս Սորոս

Կիպրոս

Կը խնդրեմ որ քնդունիմ օրագիրն շնորհաւորութիւններն Կիպրոսի առաջին մէծ յովետանին առթիւ։

ՊԱՏՐԻԱՐԿ ԴՈՒՐԵԱՆ

Պատասխանը.

1928 Յնվր. 21. Կիպրոս

Նորին Ամենապատիւ Սրբազնութեան

Ինչ համար պատիւ եւ միանգամայն հոգեյ մըն է շնորհակալ ըլլալ Ձեր Ամենապատիւութեան՝ Նորին շնորհաւորական զեղեցիլ եւ խախտալի հեռագիրն համար, զոր նիւայ քնդունեցայ։

Այս առթիւ կ'ուզեմ շնորհակցնել Ձեր Ամենապատիւութեան քէ երէկ, Տիկին Սորոսի հետ այցելոյի Մեկնեան Հասարակութեան եւ մանրամասն լինելի զայն։ Կը կրկնեմ շնորհակալութիւններն եւ մնամ Ձեր Ամեն. Սրբազնութեան խոնարհ ծառայ

ՌՕՆԱՆՏ ՍՐՔՐՈՍ

Ս. ՅԱԿՈԲԻ ՏՊԱՐԱՆ — ԿԱԶՄԱՐԱՆԸ

Ամեն. Ս. Պատրիարք Հայր, հերոս «իշխալ» մեկնեցող մը օժտած էր Ս. Յակոբի հայրանքը, լրացնելով շատ կարեւոր պէտք մը։

Այս ժամի ալ նկատի տանելով Ս. Յակոբ կազմաւորման պէտքերը, բարեհաճեցաւ երեւ նոր եւ քննարկ մեկնանք նրախից, առաջինը Նորից, երկրորդը Չեւիլի (հարօն կարելու) երրորդը Նախիլ, երեւն ալ զերման արուեստին վերջին կատարելագործումները։

Այս երեւ նոր մեկնանքը զնուած են Պատրիարքի զնով եւ կ'արժեն գրեթէ 105 ոսկի, բացի փոխադրութեան ծախսէն։

Ս. ՅԱԿՈԲԻ — ԼՈՒՍԱՆԼԱՆԸ

Ս. Յարութեան ճրագաւոյցին, Ս. Գերեզմանէն Յունաց Ս. Պատրիարքին հետ լոյս հանգնել է Սրբոց Յակոբեանց Միաբանութեան առաջակալ վարդապետներէն մէկը։ Այս պատճառը կը կատարէ Սիման Մ. Վ. Թէլեան որ վախճանեցաւ հերոս։

Ս. Արքայ Տնօրէն ժողովը ճնշող Սիման վարդապետի տեղ յաւանանութեան պատճառին կոչեց իր անդամներէն, Ս. Փրկչի վանքին եւ Առաւածածնի Տեսուչ Հոգ. Տ. Մուսէղ վրդ. Հայրապետեանը։

Լուսանան վարդապետը, ճրագաւոյցի երկոյցեան Ս. Գերեզմանին շուրջ դարձող Մեծ Քաթիօրին հանդիսապետն է, եպիսկոպոսական զգեստով բացի, եմփոքորեմէն։

Ի հնամեն երկու պատրիարքներ, Հայոց եւ Յունաց, միասին կը հանեն եղբայր լոյսը, բայց եւս Հայոց պատրիարքը վարդապետի մը տուած է այդ պատճառը, որ աւար շեղեւոր մէջ մեծ կարեւորութիւն ունի։

ՌՈՒՆԱԿԱՌՈՐԻԹԻՒՆ

Այս ժամի, Մեծպանոց կենդանի սկսեալ հայ ուխտաւորներ եկան Ս. Փաղօս, որոնց թիւը մինչեւ Սիմոնի այս վերջին մասին հազարէն ճշտած է 204ի։

Ս. Յակոբին ուխտաւորաց յատուկ սենեակներ, տարիներէ ի վեր բոնուած են հայ զարդակներու կողմէն, այնպէս որ նորեկ ուխտաւորներու շեղ շարք համար Միաբանութեան տնամարտի խոցերը կը յատկացնեն։

Երուսաղէմի մէջ Մեծպանքը կրօնական փառաւոր հանդէսներու շուրջ մըն է ուխտաւորներու հոգեւոր զբարբոյրեան եւ միջիջարտութեան յատուկ։

Առոնց առաջինն է Պայծառակերպութեան Հրաշափառն ու քաթիօր Ս. Գերեզմանի շուրջ, Մեծպանոց Բեդ. կիրակին (այս ժամի Մարտ 4), Երուսաղէմի մէջ պահուած է այն աւանդութիւնը քէ Փրկչին խաչելութիւնը շեղի ունեցաւ Քաթիօր լեռան պայծառակերպութենէն հառապուն օր ետքի։ Եւ ի յիշատակ այդ աւանդութեան՝ Մեծպանքի Բեդ. կիրակին այս հանդիսութիւնները կ'աղեւորեն պայծառակերպութեան քննորդութեան եւ շարականներով։ Այս հանդէսին նախագահեց Բարդէն Սրբազան։

Երկրորդն է Մեծպանոց Դեդ. կիրակի (այս ժամի Մարտ 18), Չեքեմեաց լեռան վրայ հրաշափառ եւ համդիսաւոր Ս. Պատարագ — Այս ժամի օղորդ չեքեմեցի պանդ թուն օրը եւ հետեւաբար յետաձգուեցաւ Չեդ. կիրակիին (Ապրիլ 1), եւ կատարուեցաւ զարմանալի նիւստի օղով ուխտաւորներու բազմութեամբ։ Այս օրուան հանդիսապետն էր Բարդէն Սրբազան, իսկ պատարագիչը Բարդարիմէս վարդապետ։

Երրորդն է Մեծպանոց Եդ. կիրակին, որուն պատարագիչը եւ Հանդիսապետը պիտի ըլլայ Ամեն. Ս. Պատրիարք Հայր, Ս. Պատարագը կը մատուցուի Ս. Գերեզմանի վրայ եւ յետոյ քաթիօր — Բայց Ն. Ամեն. Սրբազնութիւնը զգուշանալով արտաքին կարգի յոգնութեանց հետեւանքներէն, հանդիսապետն եղաւ Չիլիկիլեան Եղիշ Եպիսկոպոսը։

Չորրորդն է Չարդակապողի հանդիսութիւնները։ Դարձեալ Ս. Յարութեան Տնօրէն մէջ պատարագով եւ քաթիօրով, ամենազգի ուխտաւորներու ծովածաւալ բազմութեան մէջ, Հանդիսապետն Պատրիարք. Փիւնդ. Սրբապետը Սրբազան, որ ժամաւոր եղաւ նաեւ Առաջ Հիւնդարիի կէսօրուան հանդիսաւոր պատարագին։

Վերջապէս Չախիլի ճրագաւոյցին եւ Չախիլի առաւածան հանդէսներն քաթիօրներով եւ Ս. Պատարագով, որոնք մասնաւորապէս մեծ նշանակութիւն ունին Երուսաղէմի մէջ, որովհետեւ կապուած են միջինական շեղեւոր յիշատակին եւ միջկենդանական շեղակեցով ալ Հայ ազգին իրաւունքներուն պանդաւորութեան կողմէն։ Չախիլի պատարագիչն ու հանդիսապետն եղաւ Լուսաւորապետն Մեքարդ Սրբազան, Չախիլի երկոյցին Ս. Յակոբի բակը կատարուած հանդիսաւոր Անդաւանքին նախապետը Մասթուս Սրբազան։

Քանի որ Սիմոնի այս թիւը (ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ) միացեալ կը հրատարակուի, ժամ մը նիւթեր արելի երկար չպատեցնելու եւ միանգամայն ճանական օրերու արձակուրդին պատճառով Ամառքիս հրատարակութիւնը յատկապէս վերաբերելու համար, Չախիլի հանդիսութեանց վերաբերեալ տեղեկութիւնները կը մնան Սիմոնի Յունիսի թիւին։